

ՄԻԶԱԶԳՄԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱԿԱՆ ՀԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽԱԹՈՒՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

*ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի ասպիրանտ*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՍԸ

Տարածաշրջանային տնտեսական միասնացման դասական օրինակ համարվող Եվրոպական միությունը (ԵՄ) այսօր հայտնվել է պարտքային խոր ճգնաժամի մեջ: Որո՞նք են դրա հիմնական պատճառները, ինչպիսի՞ միջոցառումներ են իրականացվում ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ, ինչպիսի՞ հնարավոր զարգացումներ կարող են տեղի ունենալ ԵՄ շրջանակներում:

ԵՄ անդամ երկրները 1992 թ. ստորագրեցին Մասստրիխտի պայմանագիրը, որտեղ հստակորեն ներկայացվեցին Եվրոպական արժույթային համակարգին միանալու պահանջները: Դրանցից երկուսը վերաբերում էին երկրների պետական բյուջեի պակասուրդին և պետական պարտքին, ըստ այդմ՝ պետական բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցեր երկրի ՀՆԱ 3%-ը, իսկ պետական պարտքը՝ 60%-ը:

Սակայն մի շարք երկրներ, օրինակ՝ Հունաստանը և Իտալիան, կարողացան շրջանցել այս պահանջը և թաքցնել պետական բյուջեի պակասուրդն ու պետական պարտքը՝ արժույթային և վարկային ածանցյալ արժեթղթերով բարդ գործարքներ կատարելու միջոցով: Դրանք մշակվել էին ԱՄՆ-ի առաջատար ներդրումային բանկերի կողմից, որոնք զգալի փոխհատուցումներ ստացան իրենց մատուցած ծառայությունների դիմաց:

Այսինքն՝ *Եվրոյի գոտին* ձևավորվեց որոշակի խնդիրներով, որոնց էլ հետագայում գումարվեց 2000 թ. ֆինանսական ճգնաժամը՝ համաշխարհային տնտեսության անկմամբ: Սակայն, այնուամենայնիվ, 2007-ին Եվրոյի գոտում պետական բյուջեի պակասուրդի միջին մակարդակը կազմում էր ՀՆԱ ընդամենը 0.7%-ը, իսկ պետական պարտքի միջին մակարդակը՝ 66.3%-ը: Սկզբնավորված ֆինանսական ճգնաժամի հետևանքով այդ ցուցանիշներն աճեցին՝ 2009-ին համապատասխանաբար կազմելով 6.3%-ը և 80%-ը

(աղյուսակ 1): Ինչպես վկայում են աղյուսակ 1-ի տվյալները, Եվրոպական տարածաշրջանում բռնկված պարտքային ճգնաժամը չսահմանափակվեց միայն Եվրոյի գոտու տարածքով, ընդգրկեց ողջ ԵՄ-ն:

Աղյուսակ 1

ԵՄ և Եվրոյի գոտու պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի ցուցանիշները ՀՆԱ-ի նկատմամբ (%-ային հարաբերությամբ)¹

Երկիր	Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011
Եվրոյի գոտի (17 երկիր)	Պետական բյուջեի պակասուրդ	-0.7	-2.1	-6.3	-6.2	-4.1
	Պետական պարտք	66.3	70.2	80.0	85.4	87.3
ԵՄ անդամ երկրներ (27)	Պետական բյուջեի պակասուրդ	-0.9	-2.4	-6.9	-6.5	-4.4
	Պետական պարտք	59.0	62.2	74.6	80.0	82.5

ԵՄ պարտքային ճգնաժամը (Եվրոյի գոտու ճգնաժամ) դեռևս շարունակվում է, որը Եվրոպական տարածաշրջանի որոշ երկրների համար դժվար կամ գրեթե անհնար է դարձրել՝ վերադարձնելու կամ ֆինանսավորելու իրենց պետական պարտքը՝ առանց երրորդ կողմի օժանդակության:

ԵՄ պարտքային ճգնաժամը մի շարք բարդ գործոնների միաժամանակյա ազդեցության հետևանք է, որին բնորոշ է՝

1. ֆինանսական շուկայի համաշխարհայնացումը,
2. 2002-2008 թթ. ընթացքում վարկավորման պարզեցված պայմանների առկայությունը, որը գործնականորեն հանգեցրեց բարձր ռիսկայնություն ունեցող վարկավորման թվի աճի,
3. 2007-2012 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը,
4. մի շարք երկրների վճարային հաշվեկշիռների պակասուրդը,
5. անշարժ գույքի շուկաներում ձևավորված «ֆինանսական փուչիկների պայթյունը»,
6. 2008-ից սկսած՝ տնտեսական աճի ցածր տեմպերը,
7. հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումների տապալումը,
8. տնտեսության ուռճացման պայմաններում սնանկացման եզրին կանգնած բանկերին և մասնավոր պարտատոմսերի սեփականատերերին կառավարությունների տրամադրած օժանդակությունը, ինչպես նաև պարտքերի հետգնումը և մասնավոր հատվածի կորուստների փոխարինումը հարկ վճարողների հարկային բեռի ավելացմամբ:

2009 թ. երկրորդ կեսին ներդրողների շրջանում անհանգստություն առաջացավ ԵՄ պարտքային ճգնաժամի հետ կապված, որը պայմանավորված էր

¹ Աղյուսակը կազմել ենք՝ օգտագործելով ԵՄ Eurostat վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի տվյալները՝ http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_PUBLIC/2-21102011-AP/EN/2-21102011-AP-N.PDF http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_PUBLIC/2-22102012-AP/EN/2-22102012-AP-N.PDF

ամբողջ աշխարհում մասնավոր և պետական պարտքի մակարդակների անընդհատ աճով և, միաժամանակ, ԵՄ մի շարք երկրների վարկունակության նվազման միտումով: ԵՄ պարտքային ճգնաժամը ավելի ու ավելի էր խորանում հունական, իռլանդական և պորտուգալական պարտքերի վերաֆինանսավորման հետևանքով: Նշված ճգնաժամային երևույթները սկզբնապես ընդգրկել են ԵՄ անդամ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հունաստանը, Իռլանդիան, Իտալիան, Իսպանիան և Պորտուգալիան, իսկ հետագայում նաև ԵՄ անդամ այլ մինչև անգամ եվրոյի գոտում չընդգրկված երկրների տնտեսություններ:


Ամերիկացի տնտեսագետ Պոլ Կրուգմանի կարծիքով՝ ԵՄ ներկայիս պարտքային ճգնաժամի հիմքում Հունաստանի կառավարության անպատասխանատու վերաբերմունքն է ֆինանսական հարցերի նկատմամբ²: 21-րդ դարի սկզբին Հունաստանը եվրոյի գոտու արագորեն զարգացող երկրներից էր, ուստի կառավարության անդամները համոզված էին, որ հարկ չկա նվազեցնելու պետական բյուջեի պակասուրդի մակարդակը (որի մեծացման պատճառը հատկապես ռազմական ծախսերի բարձր մակարդակն էր): 2007-2008 թթ. սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Հունաստանը ծանր տնտեսական դրության մեջ հայտնվեց՝ պայմանավորված երկրի եկամտի հիմնական աղբյուր հանդիսացող զբոսաշրջության և ծովային փոխադրումների՝ տնտեսական փոփոխությունների նկատմամբ բարձր զգայունությամբ:

Որոշ փորձագետներ պնդում են, որ Հունաստանի և ԵՄ-ի համար լավագույն տարբերակը «կազմակերպված դեֆոլտի» իրականացումն է, որի միջոցով Հունաստանը դուրս կգա եվրոյի գոտուց և կվերադառնա նվազեցված փոխարժեքով ազգային արժույթի օգտագործմանը: Նրանց կարծիքով՝ եթե Հունաստանը շարունակի մնալ եվրոյի գոտու անդամ, ապա տնտեսական և քաղաքական հետևանքներն ուղղակի անդառնալի կլինեն:

Ինչևէ, ներկայիս ԵՄ պարտքային ճգնաժամի առաջացումը չի կարելի բացատրել միայն մեկ երկրի պարտքային մեծ բեռի առկայությամբ: «The Economist» վերլուծական գործակալության ամսագրի տվյալների համաձայն՝ տնտեսական իրադրությունը եվրոյի գոտում այնքան էլ լարված չի եղել, նույնիսկ համեմատաբար ավելի լավ է եղել, քան ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում: Բյուջեի պակասուրդը եվրոյի գոտում, ընդհանուր առմամբ, բավականին ցածր է ԱՄՆ-ի բյուջեի պակասուրդի համեմատությամբ (գծապատկեր 1), իսկ պետական պարտքի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2010 թ. կազմել է 85.4% (աղյուսակ 1), այսինքն՝ մոտավորապես հավասար է եղել ԱՄՆ նույն ցուցանիշին: Միևնույն ժամանակ, եվրոյի գոտում մասնավոր հատվածի պարտքի մակարդակը նկատելիորեն ցածր է անգլոսաքսոնական կապիտալիզմի երկրների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Նոր Զելանդիա, Ավստրալիա, Իռլանդիա) մասնավոր հատվածի պարտքի համեմատությամբ³:

² Տե՛ս <http://krugman.blogs.nytimes.com/2012/01/30/eurozone-problems/>

³ Տե՛ս <http://pages.eiu.com/rs/eiu2/images/EuroDebtPaperMarch2011.pdf> „The Economist“, State of the union, Can the euro zone survive its debt crisis?, March, 2011:



Պճապատկեր 1. Եվրոյի գոտու, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի բյուջետային հաշվեկշռի՝ ՀՆԱ-ի նկատմամբ %-ային փոփոխությունները 1998-2012 թթ. ընթացքում⁴

Իսլանդիան (ԵՄ, հետևաբար նաև Եվրոյի գոտու անդամ չէ, սակայն փաստը հետաքրքիր է), որը 2008 թ. խոր տնտեսական ճգնաժամային իրավիճակում էր, որի պատճառով երկրի ողջ բանկային համակարգը կազմալուծվեց, այս անգամ արդեն ճգնաժամից ավելի քիչ տուժեց, որը մասամբ պայմանավորված էր արտասահմանյան բանկերին պարտքը չվճարելու որոշմամբ: Այս բարդ որոշումը կայացվել է ազգային հանրաքվեի արդյունքում: Հատկապես ԵՄ անդամ այն երկրներում, որտեղ բանկային համակարգը կազմալուծումից փրկելու նպատակով իրականացնում էին զանգվածային ֆինանսավորում, արագորեն աճում էր նաև պետական պարտքային բեռը:

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները հստակեցնում են ԵՄ այսօրվա պատկերը, այնտեղ ձևավորված իրավիճակը: Այսպես՝ որքան էլ նշվում է, որ ԵՄ պարտքային ճգնաժամի օջախը Եվրոյի գոտին է, այնուամենայնիվ, այս գոտում կան երկրներ, որոնց պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի ծավալները չեն աճել կամ աճել են շատ փոքր չափով՝ պահպանելով մասստրիխտյան պայմանագրով սահմանված վերոնշյալ պահանջները: Այդպիսի երկրներ են Էստոնիան, Լյուքսեմբուրգը և Ֆինլանդիան:

Բուլղարիան և Շվեդիան, չլինելով Եվրոյի գոտու անդամներ, նույնպես պահպանել են իրենց պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի ցուցանիշները՝ մասստրիխտյան պայմանագրով սահմանված պահանջների համաձայն: Ճիշտ է, նշված երկրների համար չկա այդպիսի սահմանափակում, սակայն յուրաքանչյուրը կարևորում է մեծ տատանումներից հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների պաշտպանումը և երկրի կայուն տնտեսական զարգացման ապահովումը՝ հաշվի առնելով ժամանակակից աշխարհի փոխկապվածության բարձր մակարդակը: Այդ իսկ պատճառով էլ, ըստ ԵՄ վիճակագրական ծառայության՝ Eurostat-ի հրապարակած վիճակագրական տվյալների, ԵՄ բոլոր երկրները, անկախ Եվրոյի գոտու անդամ լինելու հանգամանքից, համեմատության սկզբունքային չափանիշ են ընդունում մասստրիխտյան պայմանագրով սահմանված շեմային ցուցանիշները:

⁴ Տե՛ս [http://en.wikipedia.org/wiki/File:Government_surplus_or_deficit_\(EU-USA-OECD\).png](http://en.wikipedia.org/wiki/File:Government_surplus_or_deficit_(EU-USA-OECD).png), աղբյուրը՝ Eurostat-ի և SՀԶԿ-ի 2012 թ. մայիսի գնահատականները:

Աղյուսակ 2

ԵՄ անդամ երկրների պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ %-ային հարաբերության ցուցանիշները⁵

Երկիր	Եվրոյի գոտում գտնվելը	Ցուցանիշներ (ՀՆԱ-ի նկատմամբ, %)	2007	2008	2009	2010	2011
Բելգիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-0.3	-1.0	-5.5	-3.8	-3.7
		Պետական պարտք	84.1	89.2	95.7	95.5	97.8
Բուլղարիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	1.2	1.7	-4.3	-3.1	-2.0
		Պետական պարտք	17.2	13.7	14.6	16.2	16.3
Չեխիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	-0.7	-2.2	-5.8	-4.8	-3.3
		Պետական պարտք	27.9	28.7	34.2	37.8	40.8
Դանիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	4.8	3.2	-2.7	-2.5	-1.8
		Պետական պարտք	27.5	33.4	40.6	42.9	46.6
Գերմանիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	0.2	-0.1	-3.1	-4.1	-0.8
		Պետական պարտք	65.2	66.8	74.5	82.5	80.5
Էստոնիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	2.4	-2.9	-2.0	0.2	1.1
		Պետական պարտք	3.7	4.5	7.2	6.7	6.1
Իռլանդիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	0.1	-7.4	-13.9	-30.9	-13.4
		Պետական պարտք	24.9	44.5	64.9	92.2	106.4
Հունաստան	+	Պետական բյուջեի պակասուրդ	-6.5	-9.8	-15.6	-10.7	-9.4
		Պետական պարտք	107.4	112.9	129.7	148.3	170.6
Իսպանիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	1.9	-4.5	-11.2	-9.7	-9.4
		Պետական պարտք	36.2	40.2	53.9	61.5	69.3
Ֆրանսիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-2.7	-3.3	-7.5	-7.1	-5.2
		Պետական պարտք	64.2	68.2	79.2	82.3	86.0
Իտալիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-1.6	-2.7	-5.4	-4.5	-3.9
		Պետական պարտք	103.1	106.1	116.4	119.2	120.7
Կիպրոս	+	Պետական բյուջեի պակասուրդ	3.5	0.9	-6.1	-5.3	-6.3
		Պետական պարտք	58.8	48.9	58.5	61.3	71.1
Լատվիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	-0.4	-4.2	-9.8	-8.1	-3.4
		Պետական պարտք	9.0	19.8	36.7	44.5	42.2
Լիտվա	-	Պետական բյուջեի պակասուրդ	-1.0	-3.3	-9.4	-7.2	-5.5
		Պետական պարտք	16.8	15.5	29.3	37.9	38.5

⁵ Աղյուսակը կազմել ենք՝ օգտագործելով ԵՄ Eurostat վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի տվյալները՝

http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_PUBLIC/2-21102011-AP/EN/2-21102011-AP-N.PDF
http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_PUBLIC/2-22102012-AP/EN/2-22102012-AP-N.PDF

Լյուքսեմբուրգ	+	Պետական բյուջեի պակասուրդ	3.7	3.2	-0.8	-0.8	-0.3
		Պետական պարտք	6.7	14.4	15.3	19.2	18.3
Հունգարիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	-5.1	-3.7	-4.6	-4.4	4.3
		Պետական պարտք	67.0	73.0	79.8	81.8	81.4
Մալթա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-2.4	-4.6	-3.9	-3.6	-2.7
		Պետական պարտք	62.1	62.0	67.6	68.3	70.9
Նիդեռլանդներ	+	Պետական բյուջեի պակասուրդ	0.2	0.5	-5.6	-5.1	-4.5
		Պետական պարտք	45.3	58.5	60.8	63.1	65.5
Ավստրիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-0.9	-0.9	-4.1	-4.5	-2.5
		Պետական պարտք	60.2	63.8	69.2	72.0	72.4
Լեհաստան	-	Պետական բյուջեի պակասուրդ	-1.9	-3.7	-7.4	-7.9	-5.0
		Պետական պարտք	45.0	47.1	50.9	54.8	56.4
Պորտուգալիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-3.1	-3.6	-10.2	-9.8	-4.4
		Պետական պարտք	68.3	71.7	83.2	93.5	108.1
Ռումինիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	-2.9	-5.7	-9.0	-6.8	-5.5
		Պետական պարտք	12.8	13.4	23.6	30.5	33.4
Սլովենիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	0.0	-1.9	-6.0	-5.7	-6.4
		Պետական պարտք	23.1	22.0	35.0	38.6	46.9
Սլովակիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	-1.8	-2.1	-8.0	-7.7	-4.9
		Պետական պարտք	29.6	27.9	35.6	41.0	43.3
Ֆինլանդիա	+	Պետական բյուջեի պակասուրդ	5.3	4.4	-2.5	-2.5	-0.6
		Պետական պարտք	35.2	33.9	43.5	48.6	49.0
Շվեդիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	3.6	2.2	-0.7	0.3	0.4
		Պետական պարտք	40.2	38.8	42.6	39.5	38.4
Մեծ Բրիտանիա	-	Պետական բյուջեի պակասուրդ	-2.7	-5.1	-11.5	-10.2	-7.8
		Պետական պարտք	44.4	52.3	67.8	79.4	85.0

Թեև եվրոյի գոտում և ընդհանրապես ԵՄ շրջանակներում կան մի քանի պետություններ, որոնք, այսպես ասած, այնքան էլ չեն տուժել պարտքային ճգնաժամի հետևանքով՝ պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի ցուցանիշների առումով, այնուամենայնիվ, որոշ երկրներում ճգնաժամային իրավիճակն անընդհատ սրվում է, ինչն էլ պատճառ է դառնում պարտքային ճգնաժամի՝ աստիճանաբար եվրոպական տարածաշրջանի այլ երկրների ընդգրկման:

Ներկայումս, թերևս, ամենաբարդը Հունաստանի դրությունն է, որտեղ, 2011 թ. տվյալների համաձայն, պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ 9.4%-ը, իսկ պետական պարտքը՝ 170.6%-ը (մոտ 350 մլրդ եվրո): 2012 թ. փետրվարին Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և ԵՄ կենտրոնական բանկը որոշեցին Հունաստանին տրամադրել 130 մլրդ եվրո արժողությամբ ֆինանսական օժանդակության երկրորդ փաթեթը (2010 թ. տրա-

մադրվել էր 45 մլրդ եվրո)՝ կոշտ տնտեսական քաղաքականություն իրականացնելու պայմանով: Հունաստանը պարտավորվել է 2012 թ. կրճատել ծախսերը 3.3 մլրդ եվրոյով, իսկ հաջորդ երկու տարիներին՝ 10-ական մլրդ եվրոյով: Առաջին անգամ այս համաձայնագրի շրջանակներում որոշում կայացվեց հունական պետական պարտատոմսերի 53.5%-ը վերակազմավորել՝ պետական պարտատոմսերը փոխարինելով Ֆինանսական կայունության եվրոպական ֆոնդի (EFSF) կարճաժամկետ պարտատոմսերով, որից հետո նախատեսվում էր հունական նոր պարտատոմսերը բաց թողնել ավելի ցածր տոկոսադրույքով և ավելի երկար մարման ժամկետով (11-30 տարի): Այս միջոցառումների իրականացման արդյունքում 107 մլրդ եվրո արժողությամբ հունական պետական պարտատոմսերը փոխարինվեցին Ֆինանսական կայունության եվրոպական ֆոնդի կարճաժամկետ պարտատոմսերով (հունական պետական պարտատոմսերի ընդհանուր արժեքը 206 մլրդ եվրո էր), որի շնորհիվ 2012 թ. մարտին Հունաստանի պետական պարտքը 350 մլրդ եվրոյից նվազեց՝ հասնելով 240 մլրդ եվրոյի: «Forbes» ամսագրի փորձագետների կարծիքով՝ հունական պարտքի վերակազմավորումը փաստացի դեֆոլտ է:

2012 թ. մայիսի կեսերին տնտեսական ճգնաժամը և ընտրություններից հետո նոր կառավարության ձևավորման ծախողումը հանգեցրին Հունաստանի՝ եվրոյի գոտուց դուրս գալու տեսակետի տարածմանը: Ֆինանսական շուկաներում այդ ենթադրությունն ամրագրվեց Grexit (Greek Euro Area Exit) եզրույթով:

Իռլանդիայում պարտքային ճգնաժամի առաջացման պատճառ հանդիսացան ոչ թե կառավարության մեծ ծախսերը, այլ պետության կողմից տրվող վարկային երաշխիքները: Այս երկիրը նույնպես բավականին տուժեց ճգնաժամի ընթացքում: Մասնավորապես՝ 2010-ին պետական բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ կազմեց 31%, ինչն աննախադեպ էր եվրոյի գոտու շրջանակներում: Այդ ժամանակ Ֆինանսական կայունության եվրոպական ֆոնդը և ԱՄՀ-ն Իռլանդիային տրամադրեցին 85 մլրդ եվրո վարկ, որից հետո՝ 2011 թ., այդ ցուցանիշը նվազեց՝ կազմելով 13.4%, իսկ պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 106.4%:

Լիսաբոնի Խորհրդի «Euro Plus Monitor» գիտահետազոտական կենտրոնի կողմից 2011 թ. նոյեմբերին հրապարակված հաշվետվության համաձայն՝ Իռլանդիայում պարտքային ճգնաժամի հաղթահարման նպատակով իրականացվող միջոցառումները (հատկապես արտահանման խթանմանն առնչվող) դրական ազդեցություն ունեցան երկրի տնտեսության վերականգնման առումով:

Պորտուգալիան պարտքային ճգնաժամի մեջ հայտնված 3-րդ երկիրն է, որը Ֆինանսական կայունության եվրոպական ֆոնդի և ԱՄՀ-ի կողմից 2011 թ. մայիսին ստացավ ֆինանսական օժանդակություն՝ 78 մլրդ եվրո արժողությամբ: Պորտուգալիային հաջողվել է պետական բյուջեի պակասուրդի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշը 2009 թ. 10.2%-ից նվազեցնել՝ 2011-ին հասցնելով 4.4%-ի, սակայն պետական պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշն այդ նույն ժամանակահատվածում աճել է՝ 83.2%-ից հասնելով 108.1%-ի:

Իսպանիայի պետական պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշը, այլ զարգացած երկրների համեմատությամբ, այնքան էլ մեծ չէ. 2010 թ.՝ 61.5%, 2011 թ.՝ 69.3%: Այսինքն՝ այս ցուցանիշը մոտ 20%-ային կետով ցածր է

Գերմանիայի և Ֆրանսիայի միևնույն ցուցանիշներից, մոտ 60%-ային կետով՝ Իտալիայի, Իռլանդիայի նույն ցուցանիշներից, իսկ Հունաստանի հետ համեմատելու դեպքում նույնիսկ փոքր է 100%-ով: Սակայն, քանի որ Իսպանիան եվրոյի գոտու խոշորագույն երկրներից մեկն է, տնտեսական իրավիճակն այստեղ անընդհատ գտնվում է միջազգային վերահսկողության ներքո. գումարային առումով երկրի պետական պարտքը բավականին մեծ է՝ 2011 թ. մոտ 750 մլրդ եվրո:

Իտալիայի բյուջեի պակասուրդը 2010 թ. կազմել է ՀՆԱ-ի 4.5%-ը, իսկ 2011 թ.՝ 3.9%-ը: Նվազումը տեղի է ունեցել պարտքային ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ իրականացված միջոցառումների շնորհիվ: Սակայն պետական պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշն արձանագրել է աճի միտում, մասնավորապես՝ 2007-ի 103.1%-ից 2011-ին հասնելով 120.7%-ի: Առաջին հայացքից թվում է, թե իրավիճակն Իտալիայում ավելի մխիթարական է, քան Հունաստանում (որտեղ 2011 թ. պետական պարտքը ՀՆԱ-ի 170.6%-ն է կազմել), բայց գումարային առումով Իտալիայի պետական պարտքը 2011 թ. կազմել է 1.9 տրիլիոն եվրո, մինչդեռ Հունաստանինը՝ 350 մլրդ եվրո:

Իտալիայի տնտեսության վերականգնման և պարտքային ճգնաժամի հաղթահարման առումով արդիական են հատկապես տնտեսման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները: Դրանցից են՝

1. առաջիկա 3 տարիների ընթացքում անշարժ գույքի վաճառքից ստացված 15 մլրդ եվրո գումարի օգտագործումը պետական պարտքը կրճատելու նպատակով,
2. մինչև 2026 թ. կենսաթոշակային տարիքը մեծացնել 2 տարով՝ հասցնելով 67-ի,
3. 12 ամսվա ընթացքում աշխատանքի շուկայում վերացնել որոշակի մասնագիտությունների նկատմամբ կիրառվող պաշտպանությունը,
4. մունիցիպալ ձեռնարկություններում աստիճանաբար նվազեցնել պետական սեփականության կշիռը:

Բելգիայի պետական պարտքը 2011 -ին կազմել է ՀՆԱ-ի 97.8%-ը: Այս ցուցանիշով Բելգիան 2011 թ. 5-րդն էր՝ Հունաստանից (170.6%), Իտալիայից (120.7%), Պորտուգալիայից (108.1%) և Իռլանդիայից (106.4%) հետո: Բելգիայի պետական պարտքը 2011 թ. կազմել է մոտ 362 մլրդ եվրո: Ինչ վերաբերում է պետական բյուջեի պակասուրդի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշին, ապա դա այդքան էլ մեծ չի եղել. 2008 թ.՝ 1%: 2009 թ. կտրուկ ավելացել է պետական բյուջեի պակասուրդը՝ կազմելով ՀՆԱ 5.5%-ը, 2010-2011 թթ., համապատասխանաբար՝ 3.8%-ը և 3.7%-ը:

Ֆրանսիայում պետական բյուջեի պակասուրդը 2009 թ., նախորդ տարիների համեմատությամբ, կտրուկ աճել է՝ կազմելով ՀՆԱ 7.5%-ը, 2010 թ.՝ 7.1%-ը, իսկ 2011 թ.՝ 5.2%-ը: Պետական պարտքը 2011-ին կազմել է ՀՆԱ 86%-ը (1.7 տրիլիոն եվրո):

Մեծ Բրիտանիայում պետական բյուջեի պակասուրդը 2009-ին ՀՆԱ 11.5%-ն էր, 2010-ին՝ 10.2%-ը, իսկ 2011-ին՝ 7.8%-ը: Պետական պարտքը 2011 թ. կազմել է ՀՆԱ 85.0%-ը: Անգլիայի բանկի ֆինանսական քաղաքականության հանձնաժողովի տվյալների համաձայն՝ բանկային ֆինանսավորման շուկայի կայունության խաթարումը կարող է ազդել Մեծ Բրիտանիայի բանկային համակարգի վրա, որը պայմանավորված է հատկապես այն

հանգամանքով, որ Մեծ Բրիտանիայի արտաքին պետական պարտքը եվրոպական տարածաշրջանում ամենամեծն է (7.3 տրիլիոն եվրո կամ, բնակչության մեկ շնչի հաշվով՝ 117,580 եվրո): Եվ քանի որ Մեծ Բրիտանիան սերտ տնտեսական կապերի մեջ է ԱՄՆ-ի (որի պետական պարտքը 2012 թ. հոկտեմբերին 16 տրիլիոն դոլար էր՝ ՀՆԱ 100.37%-ը⁶) և եվրոյի գոտու երկրների հետ, ուստի երկրի տնտեսական քաղաքականությունը պետք է հստակորեն նպատակաուղղել ձգնաժամային իրավիճակի հաղթահարմանը:

2012 թ. Մեծ Բրիտանիայում տնտեսական անկում արձանագրվեց, որը պայմանավորված էր եվրոպական տարածաշրջանում տնտեսական ակտիվության նվազմամբ, ինչպես նաև ներդրողների՝ եվրոյի գոտում իրավիճակի հետագա վատթարացման վախով:

Անգլիայի բանկը ձգնաժամի հետագա խորացումը կանխելու նպատակով ցածր տոկոսադրույքով զգալի ֆինանսական միջոցներ է տրամադրում Մեծ Բրիտանիայի բանկերին՝ երկրի ձեռնարկատերերի հետագա վարկավորումն ապահովելու նպատակով: Մեծ Բրիտանիայում պլանավորվել է ավելի կոշտ ներգաղթային վերահսկողություն իրականացնել, որպեսզի կանխվի Հունաստանից և պարտքային ձգնաժամից տուժած այլ երկրներից աշխատելու նպատակով մարդկանց ներհոսքը երկիր, ինչպես նաև Հունաստանում քաղաքացիական անկարգությունների դրսևորման դեպքում կազմակերպել Մեծ Բրիտանիայի քաղաքացիների տարհանումը երկրից:

Եվրոյի գոտու փլուզումը, որն այս ձգնաժամի հնարավոր զարգացումներից, սցենարներից է համարվում, կարող է ազդել Լոնդոնի՝ որպես միջազգային ֆինանսական կենտրոնի դերի վրա Մեծ Բրիտանիայի բանկերի ռիսկերի մեծացման պատճառով: Միևնույն ժամանակ, եվրոյի գոտու փլուզումը կարող է ամրապնդել ֆունտ ստեռլինգի և Մեծ Բրիտանիայի պետական պարտատոմսերի դիրքերը, քանի որ ներդրողները կփորձեն գտնել կապիտալ ներդրումների ավելի հուսալի ուղիներ: Հենց սրանով էլ պայմանավորվեց Մեծ Բրիտանիայի անշարժ գույքի շուկայում սկսված եռուզեռը, երբ ներդրողները նախընտրեցին իրենց միջոցները գործադրել Մեծ Բրիտանիայում՝ անշարժ գույք ձեռք բերելու համար և հրաժարվեցին իրենց երկրներում ներդրումներ կատարելուց (Ֆրանսիա, Գերմանիա և այլ եվրոպական երկրներ):

Նշենք նաև, որ պարտքային ձգնաժամը և եվրոյի գոտու իրավիճակի հետագա վատթարացման երկյուղը հանգեցրին շվեյցարական ակտիվներում ներդրումների աճին:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ տարիներ շարունակ ձևավորված այն կարծիքը, թե զարգացող երկրներին բնորոշ է պարտքային մեծ բեռի առկայությունը, այսօր ակներև դարձել է զարգացած երկրների գերխնդիրը, որը շուտափույթ լուծում է պահանջում: Ուստի եվրոպական տարածաշրջանի յուրաքանչյուր երկիր ձգնաժամի հաղթահարման նպատակով մշակում և իրականացնում է միջոցառումներ՝ իհարկե նաև ԱՄՀ և ԵՄ կառավարման մարմինների ակտիվ մասնակցությամբ: Մասնավորապես՝ ԵՄ պարտքային ձգնաժամը հաղթահարելու ուղղությամբ սկսեցին կյանքի կոչվել մի շարք ծրագրեր: Այսպես՝ 2010 թ. մայիսի 9-ին ԵՄ անդամ երկրների ֆինանսների նախարարների խորհուրդը որոշեց ձևավորել սկզբնապես 750 մլրդ եվրո ծավալով մաս-

⁶ Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Economy_of_the_United_States

նագիտացված պահուստային հիմնադրամ (Ֆինանսական կայունության եվրոպական հիմնադրամ՝ EFSF), որի առաջնային նպատակն էր եվրոպական տարածաշրջանում ֆինանսական կայունության ապահովումը:

Սակայն ինչպիսի՞ն կլինի ստեղծված իրադրության հետագա պատկերը: Որոշ փորձագետներ՝ խարտալիզմի (դրամի տեսության) և նորքեյնսյան դպրոցի ներկայացուցիչները, ամենասկզբից իսկ դատապարտված էին համարում միասնական եվրոպական արժույթի ներդրումը, քանի որ դրա պատճառով երկրները հրաժարվելու էին դրամավարկային և տնտեսական քաղաքականության ինքնավարությունից՝ կենտրոնացված հարկային մարմնի բացակայության պայմաններում: Առանց այդպիսի միասնական կառույցի ձևավորման՝ տնտեսական և արժույթային միության գոյությունը կխոչընդոտի առանձին երկրների կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը:

Քեյնսյան ուղղության ներկայացուցիչ չհամարվող Լուկա Ռիչին (ԱՄՀ) նշում էր, որ ԵՄ-ն արդյունավետ արժույթային գոտի չէ՝ չնայած որ ԵՄ շրջանակներում այդ ուղղությամբ բավական հաջողություններ էին գրանցվել:

Այն բանից հետո, երբ պարտքային ճգնաժամը Հունաստանից հետո տարածվեց եվրոյի գոտու այլ երկրներում, իսկ այնուհետև եվրոպական ողջ տարածաշրջանում, նշված տեսակետի կողմնակիցները սկսեցին ավելի համառորեն պնդել եվրոյի գոտու վերացման անհրաժեշտության մասին: Եվ եթե միանգամից ամբողջ գոտու վերացումն անհնար է, ապա նրանք առաջարկում են, որ սկզբնապես ԵՄ կազմից դուրս գան Հունաստանը և պետական պարտքի առավել բարձր մակարդակ ունեցող երկրները՝ իրականացնելով պետական պարտատոմսերի դեֆոլտ, վերականգնելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ինքնավարությունը, ինչպես նաև իրենց ազգային արժույթները:

«Bloomberg» լրատվական գործակալության 2011 թ. հունիսին տպագրված հոդվածներից մեկում նշվել է, որ եվրոն կարող է «փրկվել» այդ գոտուց Պերմանիայի դուրս գալով, քանի որ դրա արդյունքում այն կվերարժևորվի, որի շնորհիվ երկրները կկարողանան հրաժարվել կոշտ տնտեսական քաղաքականությունից:

«The Wall Street Journal» թերթի մասնագետների կարծիքով՝ խնդրի լուծման տարբերակ է ոչ միայն Պերմանիայի՝ իր ազգային արժույթի օգտագործմանն անցում կատարելը, այլ նաև մի նոր արժույթային միության ստեղծումը Նիդեռլանդների, Ավստրիայի, Ֆինլանդիայի, Լյուքսեմբուրգի, Ղանիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի մասնակցությամբ: Ավելցուկային ընթացիկ վճարային հաշվեկշռով այս երկրների ուժերով ստեղծված արժույթային միությունը կարող է դառնալ վարկատու երկրների հզորագույն կառույց:

Սակայն հարկ է հիշել, որ եվրոյի գոտու վերացման կամ դրա կազմից այս կամ այն երկրի դուրս գալու հարցերը ոչ միայն տնտեսական, այլ նաև կարևորագույն քաղաքական որոշմամբ պետք է լուծվեն, քանի որ հետևանքները կարող են ծայրահեղ բարդ լինել. «Եթե Բեռլինը տրամադրում է անհրաժեշտ միջոցներ և ԵՄ-ին թելադրում խաղի կանոնները, ապա կարող է մեծանալ Պերմանիայի դժգոհությունը, և դա կհանգեցնի ԵՄ կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու կողմնակիցների թվի աճին»⁷:

⁷ Sten ru.wikipedia.org, Åäðî î áéñéèé äî éäî äî é èðèçèñ, Ñéöèè î ðàñî äää ääðî çî î ú:

